40 (224). ԱՆԵՐԵՍ ԽՈՆԱԽ

Գեղացիմ՝ գեղացուն կէրթա խոնախ, դրռ չը նստեր էր՝ ձեն կիտա.

— Հա՛ց բերեք, ճա՛շ բերեք։

Տանտերն զլեզուն կը խածե։

Հաց, ճաշ կը դնին յառեջ, կը բաքլին օր ուտե, խոնախ, դու խոնախ, կը փնթփնթա.

— Ձէն աղեկ բաներ պահեր ին, վատն ին դրի յառջևսի։

Տանտերն համբերութենից դելնա, կըսե.

— Բա՛րեկամ, հրիսից լե աղեկ կերակո՞ւլ։

— Ըպա օր քի՛չ է։

— Դու հմա կի՛, եբ յուղիս՝ կը լցինք։

Խոնախն էրկու քասա կուտե, շնորակալ բիլա չէղնի, կը թորկի կէրթա։ Տանտերն յետևեն կօրորե զգլուխ, կըսե.

— Աստվածն աներեսն ստեղծեց, օր ամոթն օսկո՛վ լե չը կըռնանք առնինք։